





# ԶՕՐ. ԼԱՇՈՒՏ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԿԸ ՍԱՐՄԱՆԵՆ ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՇՈՒՐԴԻ ԱՃԽԱՏԱՆՔԻՆ ԲՆՈՅԹԸ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երկրորդ Գրաքարտի մեջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրիին: Հանդիպումի ն շեշտուեցաւ, որ միասնական քաղաքականութեամբ պիտի լուծուի երկրին էլեւմտական եւ տնտեսական տագնապը:

Կառավարութեան ժողովէն օր մը ետք եւ բջիջային հեռաձայնի թղթածրարին վերջնական լուծում մը գտնելէն քանի մը ժամ առաջ կայացած հանդիպումին որոշուեցաւ, որ կառավարութիւնը իր ճիգերը առուելարար պիտի կենդանացնէ էլեւմտական եւ տնտեսական տագնապներուն լուծման ճիգերուն վրայ:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ շեշտեց, որ Լիբանան կրնայ դիմագրաւել եւ հարթել իր դէմ ծառայած բոլոր դժուարութիւններն ու մարտահրաւերները իր պատկանելիութեամբ եւ միասնականութեամբ, որոնց իր

նէ արդիւնք երկրին մէջ գոյութիւն ունի կաշառութիւնն է համարաշխ գոյակցութիւն: Նախագահ Լահուտ նշեալ հաստատումները կատարեց յոյն ուղղափառ համայնքի Կրեկոս Գ. Լահիւս պատրիարքը ընդունած պահուն:

Նախագահ Լահուտ նշեց նաեւ, որ պետութիւնը, ինչպէս նաեւ կրօնական բոլոր դեկավարները պարտականութիւն ունին նոր սերունդը պատրաստելու պատմութեան դառն փորձառութենէն, որ պէտք է պատերազմի դաժան տարիները չապրած սերունդները գաղափար մը կազմեն այդ ժամանակաշրջանին մասին:

Լահիւս պատրիարք, իր կարգին, յոյն ուղղափառ համայնքին սնունդ վորակցութիւն յայտնեց նախագահ Լահուտի եւ պետութեան կողմէ գործադրուող քաղաքական, տնտեսական եւ բարգաւաճումի ծրագիրներուն:

Լահիւս պատրիարքը

քին ընկերակցող պատերազմի ժամանակ մաս կազմեցին նախարարներ՝ Միշէլ Մուսա, Միշէլ Ֆարաժ, երեսփոխաններ՝ Անթուան Հատուտ, Նասմէ Թոհմէ, Մարուան Ֆարէս եւ Անթուան Խուրի:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ Լիբանանի մէջ երոպական

Միութեան դեսպան Փարթիք Ռենո: Քննարկուեցան Ե. Միութիւն - Լիբանան երկկողմանի յարաբերութիւնները եւ տնտեսական բարգաւաճման եւ վարչական գործելաձեւի արդիականացման յատուկ ծրագիրներ՝ առաջարկուած Եւրոխորհուրդին կողմէ:

## ԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԿԱԶԱՅԻ ԵՒ ...

Ծարուակուած Ա. ԷջԵԸ

քանդուեցաւ, երբ հայաւական ժիհատի հետեւորդներ սխալմամբ պայթեցուցին ռուբ մը: Հայրոնի մօտ, պաղեստինցիներ խորախցի երկու փնտրու սպաննած էին Հինգշաբթի գիշեր թակարդի մը մէջ ձգելով զանոնք: Իսրայէլ սպաննաց լուծել անոնց վրէժը:

Իսրայէլեան բանակին մէկ բանբերը յայտնեց, որ Բեթլեհէմ գտնուող իսրայէլեան ուժերը Օնոնէան տօնին առիթով պիտի չհեռանան քաղաքէն, որովհետեւ յարձակումներու սպանալիքը տակաւին առկայ է: Բանբերը կը հակադարձէր Իսրայէլի նախագահ Մոշէ Քացաւի պապին կատարած մէկ խոստումին: Քացաւ պապին խոստացած էր, որ իսրայէլեան ուժերը Օնոնէան առաջ պիտի հեռանան Բեթլեհէմէն:

●ԳԵՐՄԱՆԻՈՅ նախագահ Եոհանէս Ռաու կոչ ուղղեց վերջ տալու պաղեստինեան հողերուն վրայ իրական բնակեցման վայրերու կառուցման: Ան պահանջեց նաեւ, որ պաղեստինցիներն ալ դադարեցնեն սարսափի ու սիւսերկական գործողութիւններու քաղաքականութիւնը, որպէսզի կարելի ըլլայ խաղաղութիւն հաստատել շրջանին մէջ: (ԱՖՓ)

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԽՈՅԵԱՆ ԹՈՒՐԲԻԱ...

Ծարուակուած Ա. ԷջԵԸ

Ուաշինկթոնի բանեցուցած ճնշումները: Ուաշինկթոն աշխատանք տարած էր, որպէսզի ՕԹԱՆԻ իր դաշնակիցը շուտով միանայ երոպական կազմակերպութեան: Երոպական Միութեան անդամ Իտալիան եւ Բրիտանիան ալ կը յուսային աւելի մօտ թուական մը ճշդել:

Թրքական ընդվրայուն ու բարկութիւնը եւ որոշումը վերատեսուութեան ենթարկելու յոյսերը որեւէ պղծեցութիւն չունեցան Ե. Միութեան վրայ, որուն ընթացիկ նստաշրջանի նախագահ Դանիոյ երոպական հարցերու նախարար յայտարարեց, որ

որոշումը վերջնական է, ու անդառնալի: «Այս ուղղութեամբ քննարկուելիք ոչինչ սպասէ մինչեւ Դեկտեմբեր 2004», աւելցուց նախարարը: Ան նաեւ ըսաւ, որ Քութեան անդամ Իտալիան եւ Բրիտանիան ալ կը յուսային աւելի մօտ թուական մը ճշդել:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եոշքա Ֆիշլը, իր կարգին, շեշտեց, որ բանակցութիւններու թուականը որոշուած է: Ան հերքեց նաեւ, որ Ե. Միութիւնը «քրիստոնէայ ակումբ» մըն է:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէր պահանջէ. «Դեկտեմբեր 2004-ը այդ թուականն է»: (ԱՖՓ)

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Մասնակցութեամբ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԱՐԵԳ, ԿԱՐԿԱԶ ԵՒ ԳԱՅԵԱՆԷ մանկապատանեկան խումբերու**

**Գեղարուեստական դեկավարներ՝ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, Չ. ՔԷՇԻՇԵԱՆ, Ֆ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Թուական՝ 20 - 21 - 22 - 25 - 27 - 28 - 29 Գեկտեմբեր 2002

Վայր՝ «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահ - Պուրճ համուտ ժամ՝ Երեկոյեան ժամը 5ին: Տոմարը ստանալի հետեւեալ կեդրոններէն՝ Համազգայինի գրախանութ, Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ Տիւրքթէք Geka, Պուրճ Համուտ - Obelisk գրախանութ, Անթիլիաս Համազգայինի «Լեոն Շանք» կեդրոն, Պուրճ Համուտ եւ Ելոյթի օրը կիշէն:

## ԽՐՈՒՄԹԻՒՄ - ԼԻԲԱՆԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ...

Ծարուակուած 2րդ էջԵԸ

չրջանային բազմաթիւ հարցեր: Հանդիպումին Փիքոյա յայտնեց, որ իրուակութիւն ճիգ չի խնայեր քաղաքական, տնտեսական եւ ընկերային մարզերուն մէջ բարելաւում արձանագրելու, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան անդամակցելու, կայունացնելու իրավիճակը ու հարեւան երկրներու հետ ունենալու աւելի սերտ յարաբերութիւններ:

Փիքոյա նկատել տուաւ, որ Լիբանան եւ իրուակութիւն ունին հասարակաց գիծեր եւ ներկայացուց երկու երկիրներու գերագոյն շահերուն ծառայող ծրագիրներ:

Նախագահ Լահուտ Փիքոյայի միջոցով նախագահ Միգիլի յղեց բանաւոր պատգամ մը, որուն մէջ շնորհակալութիւն յայտնեց իրուակութիւն այցելութեան անոր հրաւերին համար՝ շեշտելով, որ Լիբանան կը փափաքի բարեկամական յարաբերութիւնները բարելաւել իրուակութիւն հետ:

Փիքոյա Այնէլ Թիւնէի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հետ: Քննարկուեցան երկկողմանի եւ խորհրդարանական

մակարդակի վրայ յարաբերութիւններու բարելաւման հեռանկարները:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի ընդունեց Փիքոյան, որուն հետ քննարկեց չրջանային զարգացումները:

Փիքոյա տեսակցութիւն մը ունեցաւ նաեւ իրանացի իր պաշտօնակիցին՝ Մահմուտ Համմուտի հետ: Փիքոյա եւ Համմուտ Պուսթրոս պալատին մէջ ստորագրեցին գործակցութեան համաձայնագիր մը, որ հիմնաբար պիտի հանդիսանայ Լիբանան - իրուակութիւն դիւանագիտական յարաբերութիւններուն:

Հանդիպումէն ետք Փիքոյա եւ Համմուտ տունին մամլոյ միացեալ ասուլիս մը, որուն մէջ շեշտեցին Լիբանանի եւ իրուակութիւն շահերուն նպաստող գործակցութեան անհրաժեշտութիւնը, եւ նկատել տուին, որ դեսպանատուներու մակարդակի փոխ կնքում համաձայնութիւնը պիտի ըլլայ Չաղրէպ - Պէյրութ յարաբերութիւններու ամրապնդման հիմնաբար:

Փիքոյա հանդիպում մը ունեցաւ իրանացի անվտանգութեան գրասենեակներու համադաշնակցութեան նախագահ Ատան Բասսարի հետ:

Քասսար շեշտեց, որ առեւտրական մարզէն ներս պէտք է յարաբերութիւններ ամրապնդել, որպէսզի Լիբանան նաեւ բաւական չափով արտածումներ կատարէ իրուակութիւն, որովհետեւ տարեկան դրութեամբ Լիբանան իրուակութիւն կը ներածէ 45ն 6 միլիոն տոլարի ապրանք:

Քննարկումի առարկայ դարձան արդիւնաբերութեան եւ ներդրումներու առնչուած օրէնքներ:

**ՀԵՄ** **ՀԵՄ**

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴԴՈՒՄ - ԶՐՈՅՑ**

Շայ Դատի Եւրոպայի Յանձնախումբի պատասխանատու

**ՇԻՏԱ ԶՈՂՈՅՑԵԱՆԻ**  
ԵՒ  
**ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ ԻԵՄ**

Երկուշաբթի, 16 Դեկտեմբեր 2002ի երեկոյեան ժամը 8:30ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային տան «Լ. Շանք» սրահէն ներս:

ՍՈՒՏԵՍ ԸԶԱՏ

Մ. Ա. Հ. Ա. Ե. ՍԻՌԻԹԻՒՆ

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՅՆՃԱՐ

**ՆԱԲԱԿԱՏԻՔ**

**ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Գոհաբանական պաշտամունքը պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, կեսօրէ ետք ժամը 3:00ին, բարեպարուած եկեղեցւոյ մէջ:

ՇՐԱԽՐ

**ԱՅՆՃԱՐ Ը. Յ. ԴԱՇՆԱԳՅՈՒԹԵԱՆ 112ԱՍԵԱԿ**

Կը բանախօսէ՝ **ԸՆԿ. ԳԱՒԻԹ ԼՈՔԵԱՆ** Շայտաւանի Շանրապետութեան քաղաքաշինութեան նախարար

●Գեղարուեստական յայտագիր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Դեկտեմբեր 2002, ժամը 8:00ին, «Գալուստ Կիլիպենկեան» սրահին մէջ:

●Ժողովրդային խրախճանք Երեկոյեան ժամը 9:30ին «Նապաւ Այնճար» ճաշարանին մէջ:

Յեղափոխական երգերու մեկնաբան **ԳՕԳՕ ԹԻՒԹԻՒՆՆԵԱՆ**

Ը. Յ. Դ. «ԿԱՐՍԻՐ ԼԵՈ» ԿՈՍՏԵԻ ԴԱՍԽԱՐԱԿԱՆ ՍԱՐՄԱՆ

**EURO STYLE**

Hairwash+Highlighting  
Hair Coloring  
Head Massage  
Bain d'Huile  
Permanent Curls

**Salon for Men European Specialists**

Առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ

**Christmas offer**

until January 10 - 2003

**50 % discount**

Haircut+Hairwash+Brushing	12,000 LL
Haircut for kids	8,000 LL
Hairwash+Brushing	5,000 LL
Highlighting	25,000-30,000 LL
Hair Coloring	25,000 LL
Head Massage	8,000 LL
Bain d'huile	5,000-8,000 LL
Permanent Curls	25,000-30,000 LL

Զայլայի հրապարակ, Բաղաճապետարանի դիմաց, **BREEZEALE HOUSE** Méditerranée դրամատան կից, Ա. յարկ. հեռ. : 01 / 892081

**ԼԻԲԱՆԱՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Յարգելի՛ բժիշկ, Լիբանանի Բժշկական Միութեան վարչութիւնը ձեզ կը հրաւիրէ միութեան տարեկան ընդհանուր ժողովին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00ին, միութեան տան մէջ:

Ձեր ներկայութիւնը խիստ փափաքելի է:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Վարչութեան գործունէութեան նիւթաբարոյական տեղեկատուութիւն
2. Վարչակազմներու մասնակի ընտրութիւն
3. Կարգերու քննարկում
4. Շիրաքարտի կազմում

ՄԱՆՕԹ. Ժամը 10:30ին, ներկայութեան թիւը պիտի համարուի մեծամասնութիւն:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Շայ Կարողիկէ

**ՄԵՍՐՈՊԵԱՆ**  
Արուեստից Վարժարան

Բացում Բ. երկամսեակի

**Անգլերէն՝**  
16 Դեկտեմբերին

**Համակարգիչ՝**  
23 Դեկտեմբերին

Համակարգիչի լիւր դասընթացքը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

260504  
www.mesrobian.com

11 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

437 ՈՒՍԱՆՈՎ

ՔՈՎԸՆՏԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒՄ

«ՄԱՏԱՄ»-ԻՆ ՄԱՀՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻՔՈՎ

Պատշգամի ներ ու բարձր դուռ-պատուհաններն ճաշասենյակի թափանցող լույսը, կանոնաբեր կյանքը, մեղմ ցուրբեր ու կերպարներն...

Ձիս քիչ մը անակնկալի բերող առաջին առարկան կարի տուփը եղաւ եւ թելն ու ասեղը՝ Մատամի ծուկներուն: Աշակերտի մեր հիացիկ աչքերուն երեւցող վայելուչ գգեստներուն Մատամին ստեղծագործ մատները դպած էին... Այսպէս, իր տունէն ներս, մազլցող գրողարաններուն ու պատերը ծածկող գեղանկարներուն միջեւ, ժրջան տանտիկին մը կար, պարզ, ողջմիտ, բծախնդիր: Եւ պատերազմի տարիները, բիրտ ու խոպոտ, հեշտօրէն չընթացան Մատամին համար: Նորայայտ ու խայտաբղետ գաղթականներով հիմնովին այլափոխուած քաղաքային մէջ, իր կեանքի ձեւին ու որակին անյարիր կենցաղային երեւոյթներուն պէտք եղաւ համակերպիլ: Խոռովիչ էր տեսնել Մատամի, կանգնած՝ գուպ, սրտուն, արծառնապատիւ, իր շուրջը թաւալող, գինք հրմշտկող առօրեայ կոպիտ հարուածներուն տակ: Եւ դե՞ն էապէս մարդկային: Մարդապաշտ գրականութեան էջերուն շեշտները կը վերադառնէին իր, յանալ վիրաւոր, բայց միշտ պայծառ ու հպարտ աչքերուն խորք: Իր դրացնութեան մէջ ապրող որեւէ աշակերտ հարցում ունէր ֆրանսերէնի մասին, դա՛ս պէտք էր տալ: Մատամին պարզած ձեւերը միշտ վեր կը բաշտէ իրեն դիմողները: Եւ անասման ներողամտութեամբ, բացատրութիւն կը գտնէր գաղթական դարձած մարդոց երբեմն անընդունելի արարքներուն:

Սակայն, հոն ուր անցնող պէտք էր ըլլալ, Մատամը մնաց անգիշող: Պիտի չմոռնամ վրդովումը գոր ապրեցաւ ի լուր հայկական դեպքանատան բացման օրը, թուրք դեսպանին ուղղուած հրաւերին: հայ աշակերտ-պատանի երիտասարդին հետ վագֆ ան ձեմարան, երթալ մասնակցելու համար ժողովրդային հասարակութիւնը հատուածական չէր երբեք: հայկական բոլոր մշակութային միութեանք ձեռնարկներուն յարգելի հիւրը եղաւ միշտ, գոհացնելով իր մտաւորական հատարքներովն: Գեղարվեստական ճաշակը, գոյգ ժառանգութիւն՝ երկարող միջնադարից, մինչեւ Մատամու Ջարիֆեան:

Ու կրնա՞մ մոռնալ ընթերցումի մեր ժամերը- Ջարիֆեան, Մեծարեց, Վարուժան, Թեքեան, Մ. Իշխան: Բանաստեղծութեան հիւսիսը գալուստ-թիւններն ու ուժակն շերմութիւնը կը բաժնէինք զմեզ: Հոնկէ՛ նարեկ, ոստումը հեշտ կ'ըլլար: բնագիրն ու բարգմանութիւնը: Մատամին հատապատկերը աչքերը կը փայլէին եւ կը յուզէին զիս:

Ու ինձի կը թուի հիմա, թէ երբ ան, ի տես 2002-ի նոր օրացոյցի առաջին էջէն իրեն ժպտաող Սուրենեանի Աստուածածին գեղեցիկ դեմքին, բնական շարժումով մը թեւերը տարածեց ու բացականչեց՝ «Ինչ աղուոր կը նայի ինձի», մեզմէ գաղտնի, ժամադրութիւն մը առաւ...

ՀԱՂԻԿ Մ.

Պէշտով 13.12.02

ՀԱՒԱՆԱԿԱՆ Է ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ ԵՐԿԱՐԱՏԵՒ ՍԱՌԵՑՈՒՄԸ

Փրակայի մէջ տեղի ունեցած ՕԹԱՆի վեհաժողովին եւ անոր յաջորդած Պուշ - Փուլին հանդիպումէն ետք անցած կարճ ժամանակամիջոցին համաշխարհային մակարդակի վրայ կ'ուրուաղծուի գերպետութիւններու դիմակայութեան նոր հանգրուանի մը սկզբնաւորութիւնը: Աւելին՝ այդ գարգացումները այնպիսի կայծակնային արագութեամբ կ'ընթանան, որ շուտով կրնան սկզբունքորէն նոր կացութիւն ստեղծել նաեւ մեր շրջանին մէջ:

Դատելով այս ամէնէն, Մերձպայլթեան երկիրներուն ՕԹԱՆի անդամակցութենէն ձեռնպահ մնալու մասին ամերիկացիներուն խոստումին դրժումը խիստ ծանր անդրադարձ մը ունեցած է ուսումնասիրական յարաբերութիւններուն վրայ՝ սկիզբ դնելով նոր դիմակայութեան նախապատրաստման գործնական քայլերու ամբողջ շարքի մը: Ի հարկէ, արտաքուստ կողմերու իրարու հանդէպ պահանջները սկզբունքային փոփոխութիւն չէ կրած: Բայց, անոր զուգահեռ, ուսումնական դիմանադիտութիւնը այնպիսի արագութեամբ եւրասիական ուղղուածութիւն կը հաղորդէ իր ռազմավարութեան, որ կիրարկուեցաւ Ռուսիոյ դէմ՝ Պալեստինայի եւ Մերձպայլթեան երկիրներուն մէջ, այժմ կ'ուղղուի Միացեալ Նահանգներու եւ ՕԹԱՆի դէմ՝ ուսումնասիրական յարաբերութիւններու բարելաման, ուսուչինական եւ ուսուչնական ռազմավարական գործակցութեան հիմքերու յստակացման տեսքով:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի Չինաստան այցելութիւնը կարեւոր կը նկատուէր նախ եւ առաջ անով, որ ներկայիս այդ երկու գերպետութիւնները մէկ անգամէն, գրեթէ մէկ հարուածով կը ընջեն այն բոլոր ցաւուն խնդիրները, որոնք ապագային ոչ միայն կրնան օգտագործուիլ ուսուչինական յարաբերութիւններուն վնասելու համար, այլեւ դառնալ երրորդ կողմի՝ տուեալ պարագային Միացեալ Նահանգներու միջամտութեան առիթ: Ռուսիա եւ Չինաստան մէկը միւսին կու տայ ձեռքերու լիակատար ազատութիւն՝ գործող կամ հաւանական տագնապներու այն գոտիներուն հանդէպ, որոնք կրնան դառնալ արտաքին միջամտութեան թիրախներ (ՉՅՅՆԻԿ, Թիպէթ):

Աւելին. Ռուսիա խորհրդային Միութեան նման կը ճանչնայ Չինաստանի իրաւունքները Թայուանի հանդէպ: Այդ մէկը կը նշանակէ, որ կը սկսի գործել աշխարհաքաղաքական ամէնէն կարեւոր օրինակաբարձիւններէն մէկը՝ ազդող ուժին հակազդելու ներուժ կարողականութեան կուտակման անխուսափելի գործընթացը: Եթէ ասոր վրայ գումարները նաեւ այս փաստը, որ Իրաք ներխուժելու Միացեալ Նահանգներու իրական սպառնալիքը կ'ապահովէ Իրանին, իսկ յստակ գործի վերածուելու պարագային՝ նաեւ արաբական աշխարհի եւրասիական կողմնորոշումը, ապա կարելի է միայն պատկերացնել, թէ ինչ կը սպասէ ԱՖղանիստանի ու Միջին Ասիոյ մէջ հաստատուող ամերիկացիներուն, թէ՛ անոնք շարունակեն ՕԹԱՆի ընդարձակման քաղաքականութիւնը:

Բայց այդ մէկը տակաւին, ինչպէս կ'ըսեն, գործին սկիզբն է՝ Ռուսիոյ կողմէ Միացեալ Նահանգներուն ցոյց տրուող դեղին ջարտը՝ նախազդուարարումը այն մասին, որ Արեւմուտքի հետ իր մերձեցման քաղաքականութիւնը ունի եւրասիական այլընտրանք: Հիմնականը այն է, թէ արդեօք նման այլընտրանքի ցուցադրութիւնը պիտի վերածուի՞ համակարգուած ու հեռակարգային ռազմավարութեան: Մեր կարծիքով, այո, որովհետեւ ոչ թէ Արեւմուտքի հետ համարկման մէջ շահագրգռուած Ռուսիան, այլ նոյնիսկ Միացեալ Նահանգներու ներկայ ղեկավարութիւնը իր օրէ օր աճող ախորժակներով անխուսափելի կը դարձնէ նոր դիմակայութեան հասունացումը: Այսպիսի պայմաններու մէջ խորհրդային զինուորական եւ քաղաքական խորհրդանիշներու վերականգնումը կը վկայէ այն մասին, որ Ռուսիա շատ աւելի յստակ եւ որոշակի քաղաքականութիւն պիտի որդեգրէ, իսկ աւելի ճիշդ՝ գործադրէ նաեւ խորհրդային նախկին հանրապետութիւններուն հանդէպ:

Համաշխարհային մակարդակի նոր գործընթացները կարճատեւ չեն, պահու թելադրանքով կատարուող քայլերու արդիւնք չեն, ուստի չեն կրնար իրենց անդրադարձը չունենալ նաեւ անդրկովկասեան ամբողջ շրջանի, որուն մէջ՝ նաեւ Հայաստանի մէջ զարաբաղեան խաղաքարտը ներքին քաղաքական նպատակներով խաղալու նախորդ փորձերը, որոնք կիրարկուած են մեր մէջ վերջին տարիներուն, եւ մասնաւոր՝ նախագահական ներկայ ընտրութիւններուն նախօրեակին, ձեռք կը բերեն բոլորովին նոր իմաստ եւ նշանակութիւն:

Ակնյայտ կը դառնայ, որ իրենց հաշուարկներուն մէջ պիտի սխալին այն բոլոր ուժերն ու գործիչները, որոնք յոյս ունին, որ նախագահական ընտրութիւններէն անմիջապէս ետք Հայաստանի ղեկավարութիւնը պիտի յայտնուի զարաբաղեան տագնապի շուտափոխ լուծման պարտադրանքին առջեւ՝ լայն կարելիութիւններ բանալով իրենց քաղաքական փոխ վրէժին՝ նոր իշխանափոխութեան համար: Ներկայիս ուրուագծուող համաշխարհային նոր դիմակայութիւնը կրկին ի դերեւ պիտի հանէ այսպիսի յոյսեր փայտաղղ գործիչներուն ձրագիրները եւ անոնց կողմէ ներկայիս շարունակուող քաղաքական մնջախաղը պիտի վերածէ կատարեալ զանշտի՝ անխուսափելի դարձնելով զարաբաղեան տագնապին նոր, աւելի երկարատեւ սառեցումը:

ԳԷՈՐԳ ԽՈՒԳԻՆԵԱՆ

«Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէնի վերածուած)

ԵՐԶ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՆԾԱՆՄԱՆ 50ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՄՕՏԵՑԱՆՔ ԵՒ ՏԵՍԱՆՔ ԻՄԱՑԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ



Գարեգին Ա. կ'արժանանայ համաժողովրդային ընդունելութեան

Շուրջ եօթնասուն տարեկան պէտք է ըլլայ ներկայիս այն անձը, որ մտերմիկ պահու մը պատմեց ինձի, իր դպրոցի տնօրէնութեան կողմէ, իբրեւ նախակիրթարանի աշակերտ, մինչեւ զի՛ջրի ճամբայ (Պուշ-Փուլին) «Արմենիա» պողոտան) ստորագած ըլլալը՝ աշակերտական շարքերով դիմաւորելու համար Ամերիկայէն եկող Մեծի Տանն կիլիկիոյ ընտրեալ հայրապետը՝ Գարեգին Ա. Յովսէփեան կ'աթոռազնայ:

Մովածաւալ բազմութեան մէջէն բաց տանիքով ինքնաշարժ մը վեղարուէր մը կը տանի: Մերթ ընդ մերթ ոտքի կը կանգնի ան, սակայն դարձեալ ղեկավար տեսնելի ըլլալով յոգնախուռն ժողովուրդի հիւսաւած խնդրումներ: Մանկական հետաքրքրութիւնը յատուկ կը մղէ աշակերտները՝ տեսնելու այս անձը: Մարդ մը, որուն աջը համբարուն համար, վարժարանի տնօրէններ, մեծանուն ուսուցիչներ, պաշտօնական տարագ հազած փողկապուտը մարդիկ իրենց լայն զլխարկ դրած տիկիններուն հետ միասին կը փութան զէպի վեհօրէն յառաջացող ինքնաշարժը:

Մանուկութեամբ: Մանկական երեւակայութիւնը, հայոց պատմութեան էջերուն մէջ արձանագրուած մեծ դէմքերու անուններուն հետ, ստեղծել էր Ֆիգիբեական մեծութեան պատկերներ՝ մեր եկեղեցւոյ տիտան դէմքերուն իբրեւ հարազատ ուրուանկարներ: Սահակ Պարթեւ կ'աթոռազնայ... Ներսէս Շնորհալի հայրապետ... եւ ուրիշներ, որոնց ուսերուն վրայ թիկնեղ, կը կանգնէ այսօր մեր եկեղեցին առաքելական:

Ու հիմա... փոքրակամ մարդ մը կուսաւորուի զահին զահին կը բազմի իբրեւ արժանաւոր յաջորդը սրբազնասուրբ մեծերուն: Մանկական տրամաբանութիւնը չէր դադար բանելէ զուգահեռներ փնտռելով այս պատկերներուն միջեւ: Թեթեւ ժպիտով մը, սակայն մեծ խանդավառութիւն արտայայտող աչքերով կ'օրհնէ ան ժողովուրդին խուռններամ շարքերը, որոնք անվերջանալի կը թուին զարմանքով մինչեւ Անթիլիանի մայրավանքը: Ոստիկանները հազիկ կը յաջողին զսպել ցնծութեամբ գինովցած ժողովուրդը, որ իր հովուապետին ժամանակով իր իղձերուն ու երազներուն մարմնառումը կը տեսնէ սեփական աչքերով: Կիլիկիոյ Տան ծառը դարձեալ գարուն կ'ապրի՝ նոր ժամանած հայրապետին ալեփառ ձմրան մէջ: Կը վերբեմնիկ պատմական արքայանիտ քաղաքի հաստարուն կաղնին դալար ճիւղերով, ու կարճեալ կը բոցավառի յոյսը, որ մարիլ չի՛ դիտեր:

Մանուկութեամբ: Մանկական երեւակայութիւնը, հայոց պատմութեան էջերուն մէջ արձանագրուած մեծ դէմքերու անուններուն հետ, ստեղծել էր Ֆիգիբեական մեծութեան պատկերներ՝ մեր եկեղեցւոյ տիտան դէմքերուն իբրեւ հարազատ ուրուանկարներ: Սահակ Պարթեւ կ'աթոռազնայ... Ներսէս Շնորհալի հայրապետ... եւ ուրիշներ, որոնց ուսերուն վրայ թիկնեղ, կը կանգնէ այսօր մեր եկեղեցին առաքելական:

Սեղի՜ չգոյութեան, թէ դիւթիլ խօսքէն կախարհուած՝ ժողովուրդի բազմութիւնը հեղահեղ աւելի կը խտանայ զէպի խորանին բեմը: Աշակերտներ լեցուցած են արդէն Մայր տաճարին դասը ու միախառնուած՝ եկեղեցականներուն: Աշակերտներէն ոմանք գրեթէ կ'պսծ են ընտանի վրայ կանգնած փոքրաւակամ, բայց մեծ հետաքրքրութիւններուն: Այդ աշակերտներէն մին էր դիմաւորութեան հասարակութեան ղեկավարը: Մատամի յարգելի հիւրը եղաւ միշտ, գոհացնելով իր մտաւորական հատարքներովն: Գեղարվեստական ճաշակը, գոյգ ժառանգութիւն՝ երկարող միջնադարից, մինչեւ Մատամու Ջարիֆեան:

Մատամի յարգելի հիւրը եղաւ միշտ, գոհացնելով իր մտաւորական հատարքներովն: Գեղարվեստական ճաշակը, գոյգ ժառանգութիւն՝ երկարող միջնադարից, մինչեւ Մատամու Ջարիֆեան:

Արամ Ա. ազգընտիր սրբազնագոյն հայրապետի բարձր հովանաւորութեամբ տեղի ունեցած վախճանման 50ամեակի հանդիսութիւնը մայրափանքին մէջ, այդ մեծութիւնը ճանաչեցաւ ներկայիս կայունութեան տարածքը: Անմեղունակ դպրոցական պատանիին պէս մե՛նք ալ մօտեցանք հոգեւոր հայրապետին, տեսա՛նք անոր իմացական բարձրութիւնը եւ ճանաչանք անմահութեան ճանապարհի յաւերժ ձա՞մարդը, որովհետեւ անմահները ո՛չ միայն լուսատու ջահեր են ներկայիս լուսաւորող, ո՛չ միայն ապազան կը կերտեն նոր սերունդին առաջնորդող ուղեցոյց հանդիսանալով, այլեւ ժողովուրդի մը յաւերժութիւնը կ'եւրաշխարհեն յաւիտեանէ յաւիտեան:

ԳՐԻԳՈՐ ՎՐԷ. ԶԻՖԹՈՒՆԵԱՆ

PHOTO NERSES. ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ. Զոր ուրախ առիթներու (լուսանկարները տպուած ճոր հասած ԱՐԴԻՎԱԿԱԿ DIGITAL մտքնայի միջոցով) որակաւոր եւ զանազան լայնորով. Ստանձնում՝ 20 վայրկեանով. Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի եւ կամ FLOPPY տիպերներու վրայ. CameraBuddy ճիշտ հաւանքով պակտներ եւ նկարի շրջանակներու ցնդոր տեսակաւ. Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը. արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիններով. Պուշ-Փուլին. Զաղաքապետարանի փողոց. «Սանթրո Արիս» դիմաց. Հեռ. 01-261858 եւ 01-255992

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ. Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագործ խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ. ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄՐ 5:00:

# Գրական Էջ

## ՍԱՐԴԱՐԱՊԱՏԷՆ ՄԻՆՉԵԻ ԱՍՏՂԵՐ

«Մեր հայեացքն է, թե ամենայն մի խօսք կամ գրություն, որ դաստիարակելու նպատակ ունի, պէտք է հիմնուած լինի ուղղամտութեան, ճշմարտութեան եւ ներքին համոզման կամ հաւատի վերայ, որ ուղին է «Դէպի լոյս եւ կեանք» մատնանշելու»:

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

Հայաստանեայց եկեղեցւոյ եւ հայ մշակոյթի եզակի դէմքերէն մէկուն՝ Գարեգին Ա. Յովսէփեան լուսաշիշտակ հայրապետի վախճանման 50ամեակին նուիրուած յուշ երեկոն, բայց մա՛նաւանդ այս առիթով Գ. տպագրութեան արժանացած «Դէպի լոյս եւ կեանք» անուն սրտագրաւ հատորը եղան այն գեղեցիկ առիթները, որ իրերայաջորդ սերունդներու ոգի, հաւատք, իմացութիւն եւ լոյս բաշխած այս երանաշնորհ հայրապետը դառնալ մերօրեայ ներկայութիւն եւ իր հոգեմտաւոր անդրադարձներով դարձեալ ջերմացնէ մեր ցուրտ ու հետզհետէ աւելի ապամշակութաբարձր առօրեան: Գ. տպագրութեան արժանացած «Դէպի լոյս եւ կեանք» անուն քարոզներու, պատգամներու եւ քանի մը յօդուածներու այս հաւաքածոյին ընդմէջէն ո՛չ միայն տեսանելի դարձան տարբեր վայրերու եւ բոլորովին այլ ժամանակներու մէջ արտասանուած խօսքերուն հոգեմտաւոր ու իմացական համապատկերը, այլեւ՝ ամբողջական էակակարը հաւատքի եւ արուեստի լուսեւրոպայեան իմաստնացած լուսամտար հոգեւորականին ու նշմարիտ հայուն:

գրութիւնները չեն անոնք: Անորոշութեան մէջ տուայտող մարդ էակը մխիթարելու, հոգեպէս գօտեպնդելու կամ տօնական առիթով անոր «հանգուցիչ մի խօսք ստեղծելու» սիրոյն չեն արուստանուած քարոզագրութիւնը արուեստի գեղեցիկ ոլորտներ բարձրացուցած սոյն ստեղծումները՝ հոգիի ու մտքի անջրպետները խտացուցած այս յիստուկեց գոհարները: Եթէ այդպիսին ըլլային, անոնք կը դառնային սովորական, առաւելագոյն պարագային՝ անթերի եւ օրինակելի քարոզներ:

Բայց անոնք «օժանդակ եւ առաջնորդ քարոզներ» դառնալէն շատ աւելի են, կեանքը յաւերժական լոյսի բովանդակութեամբ ու պատգամներով իմաստաւորող հոգեմտաւոր թոխչներու արդիւնք վկայութիւններ են ամէն բանէ առաջ եւ գեղեցիկ ու նշմարիտ փառաբանող պատարագ: Հաւատացեալ ու մաքրամաքուր մարդուն ազօրքը նաեւ, այն մարդուն, որ Աստուծոյ թափանցումով իր հոգիին ու սրտին մէջ կը դառնայ «Բարձրագոյն գեղեցկութիւնը, բնականաբար յաւիտեան կեանքի եւ գաղափարների»:

Վերջ ի վերջոյ, որքան ալ գեղեցիկ ըլլան քարէն, մետաղէն, նիւթէն եւ նոյնիսկ անմահական խօսքէն մարդուն բարձրացուցած գեղեցկութիւնները, մնալուն գեղեցկութիւնը կենդանի՝ Մարդն է, այսինքն՝ «Նորա հոգին, նորա անձը»:

Այս իսկ պատճառով, հայ մարդուն եւ անոր հրաշակիրտած աստուածաշունչ հրաշալիքներուն պաշտամունքը Գարեգին Ա. սրբանուն վեհը Արցախի բարձունքներէն առաջնորդէ մինչեւ Սարդարապատի մահու-կեանք կրակէ օղակներ, որոնցմէ յաղթական դուրս եկած երիտասարդ հոգեւորականը շարունակեց բարձրանալ սիրոյ, պաշտամունքի, հաւատարմութեան ու ծառայութեան լուսափայլ կատարներն ի վեր, Գառնիի պեղումներէն մինչեւ հայ մանրակարչութեան ու ձեռագիրներու վերածնունդներ, աստուածաբանական խոկումներէ մինչեւ բանասիրական յայտնագործումներ եւ հոգեւոր ու մշակութային ինքնադրոշմ՝ մուսուլմաններէ մինչեւ յաւերժութեան աստղեր:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## ՄՇԱԿՈՅԹԻ ՅԱԲԻՏԵՆԱԿԱՆ ԱՐԺԷՔՐ

Առաջաւոր Ասիայի ազգերի արուեստների հետ հիացմունքով պիտի յիշուի մեր գողտրիկ Հարփսիմէն, հոյակապ Ջուարթնոցը, Անիի մայր եկեղեցին, Աղթամարի Ս. Խաչը, Հաղարտն ու Սանահինի իրենց պէսպիսութիւններով եւ ճարտարապետական ձեւերի եւ քանդակագործութեան հարստութեամբ: Երբեք չպէտք է մոռցուի, որ Այա Սոֆիայի գմբէթը մեր Տրդատ ճարտարապետն է նորոգել, Անիի մայր եկեղեցիի մեծ արուեստագէտը:

Ոչ պակաս արժէքաւոր է մեր ձեռագրական մանրանկարչութիւնը: Տարաբախտաբար շատ հին ձեռագիրներ մեր ձեռքը չեն հասել. նրանք ոչնչացել են այլ եւ այլ պատճառներով: Թուականով ամբողջական մեր ամենահին ձեռագիրը Լազարեան ճեմարանի 887 թուի աւետարանն է. բայց Ժ. դարից ունենք բաւական թուով աւետարաններ, նաեւ՝ քիչ թուով այլ բովանդակութեամբ ձեռագիրներ: Սակայն Ժ. - ԺԱ. դարերի աւետարաններից շատերի մէջ պահուած են մանրանկարչութեան հին աւանդներ, մինչեւ Զ. դարի ճարտարապետական զարդարանքների աղբյուրով:


Հայ մանրանկարչութիւնը կարելի է երկու մեծ շրջանի բաժանել՝ Արեւելեան Հայաստանի եւ Կիլիկիան: Առաջինի մէջ պահուած են աւելի հին արուեստի հետ կապուած աւանդներ, թէ՛ պատկերագրութեան եւ թէ՛ զարդարանքի մէջ. իսկ Կիլիկիանը պահուած է անդրեւծ արեւելեան աւանդներ, իւրացրել է որպէս կողմեր բիւզանդական եւ մուսուլմանական, ինչպէս եւ եւրոպական (խաչակրաց) արուեստներից, բայց՝ վերամշակութեան ենթակիցով: Հայ մանրանկարչութեան բարձրագոյն զարգացումը պիտի համարել ԺԲ. դարի երկրորդ կէսերից մինչեւ ԺԴ. կէսերը: Երկու շրջանից էլ ունենք շատ կարեւոր, արքայական եւ կաթողիկոսական ձեռագիրներ թէ՛ Երուսաղէմի մատենադարաններում, նաեւ Վենետիկի Սիւրիթարեանների, քիչ չափով էլ եւրոպական եւ ամերիկեան մատենադարաններում: Յիշել կարող ենք Գաղիկ Կարսեցու, Կոստանդին Բարձրբերդցու, Հեթում Ա. (հատուկտորներով միայն), Լեւոն Գ. եւ Կեռան թագուհու, Հեթում Բ. եւ ուրիշ արեւելեան եւ Կիլիկիանի իշխանների եւ իշխանուհիների սեպհականութիւնները, ճոխ նկարագրութեամբ ձեռագիրներ, երբեմն եւ ստացող թագաւորների եւ թագուհիների պատկերներով, որոնք ազգագրական պատմական մեծ արժէք ունին:

Արեւելեան Հայաստանում եւ Կիլիկիայում ծաղկել են գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստի շատ զարդանքներ, յիշուած են կամարականների զարդեր երեսուն գրիչ միաբաններով, Ժ. դարում Տաթևի զարդեր, ԺԱ. - ԺԳ. դարերը Հաղարտի զարդեր, ԺԳ. - ԺԴ. կէսերը Գլաձորի մեծ զարդեր, եւ ուրիշ վանքերում զարդերը: Իսկ Կիլիկիայում՝ Դրազարկի արքայական, Հռոմկալիի հայրապետական եւ Սկեւռայի զարդեր, Համբոնացիների հովանաւորութեան տակ, ուր գործել են «անաս» գրիչներ եւ «աստուածապարգեւ արհեստի» նկարիչներ:

Հայ մանրանկարչական արուեստի ուսումնասիրութիւնն սկսուած է նախ եւրոպացիների կողմից, Սթրիկովսկիի, Մաքլէր, բայց եւ հայերի, ինչպէս Սիւրբաբի Տէր Ներսէսեանն է, կամ հանգուցեալ Սազլուցեանը, իսկ առաջը են մատակարարող Չոպանեան եւ ուրիշ շատեր: Յուսալ կարող ենք թէ՛ հայ մանրանկարչական արուեստի նիւթերի եւ ուսումնասիրութիւնների կարգաւորեալ աշխատութեամբ, հնարաւոր կը լինի նոյնչափ հետաքրքրութիւնը զարթոյնել եւ զնահատելի դարձնել, որպէս հայ ճարտարապետութիւնը: Մենք պարծենալ կարող ենք ամենաբազմակիրթ ազգերի կողմից մեր 20 հազար տուփ կամ հատոր ձեռագիրներով, ուր պահուած են հայ մտքի եւ անցեալի ամբողջ արտագրութիւնը, մեր ազգային ամենամեծ հարստութիւնը:

Հայ ինքնուրոյն եւ թարգմանական մատենագրութիւնը նոյնչափ կարեւորագոյն արժէք է Մերձաւոր Արեւելքի ազգերի քաղաքակրթութեան պատմութեան ուսումնասիրութեան համար: Նախ հայ պատմագրական գրականութիւնը, որ աղբյուր է նաեւ այն ազգերի պատմութեան, որոնց հետ չհիտել է հայ ժողովուրդը, սասանեան պարսիկները, սուրիացիք, արաբները, բիւզանդացիք, սելճուկները, խաչակիրները, առանց հայ պատմագրութեան օգտագործման միշտ պակաս կը մնայ այդ ազգերի գործերի եւ արձակագրերի պատմութիւնը:

Հայ տառերի գիւտի հետ Աստուածաշնչի թարգմանութիւնը մեր երանելի հայրերի՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի եւ նրանց հաւակերտների հետ՝ Մերձաւոր Արեւելքի ազգերի համար եւս նշանակալից պատմական երեւոյթ էր: Նրանց եւ լալորող սերունդների ձեռքով թարգմանուել են, գրեթէ, բոլոր նշանաւոր եկեղեցական հայրերի գործերը: Աստուածաշնչի թարգմանութիւնը միայն մի գլուխ գործոց էր. դասական, յստակ գրաբարով, Եզնիկի սքանչելի «Նղծաղանդոց»ի եւ քաղցրախօսիկ Եղիշէի հետ: Ապա իրենց հետ, Օրիկիւնէսից, Հիւրոյիտից թարգմանութիւններ ունինք, ամբողջապէս կամ հատուածներով մեզ հասած, որոնք բնագիրներից ոմայք կորած են միայն հայ թարգմանութեամբ մնացած: Չորսից հինգերորդ դարերի բոլոր նշանաւորագոյն հայրերի, գրեթէ, ամբողջական թարգմանութիւններն ունինք. Աթանասի, Եփրեմ Ասորու, Զգօնի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածարանի եւ Գրիգոր Նիւսացու, Ոսկերեանի, Եպիփան Սայամիացու, Կիւրեղ Աղեթսանդրացու, Տիմոթէոս Կուզի, որոնց գրուածքներից ոմայնք բնագիրը նոյնչափ կորած է: Հարկաւոր է յիշել, թէ Բարսեղ Կեսարացուի եւ Գրիգոր Աստուածարանի եւ Գրիգոր Նիւսացու հետ առաջին հարկաւոր ձեռագրերը, որոնք նախապէս լուսաւորուած են յայտնաբերուած, որոնք նախապէս լուսաւորուած են յայտնաբերուած, որոնք նախապէս լուսաւորուած են յայտնաբերուած, որոնք նախապէս լուսաւորուած են յայտնաբերուած:



չել, թէ Բարսեղ Կեսարացուի եւ Գրիգոր Աստուածարանը, ուրիշ Հայ ուսանողների հետ Պրոյերեսիոս Հայ հոետորի եւ փրիխոսփայի աշակերտներն են, որ նշանաւոր հանդիսացաւ Աթէնքում եւ Հռոմում իրբեւ առաջնակարգ գիտնական եւ պերճախօս: Այսպիսով հնարաւորութիւն է ստեղծուել լայն չափերով օգտուելու այդ հայրերի հանճարեղ հոգու ճոխ ժառանգութիւններից:

Յիշատակելի է վերջապէս մեր հոգեւոր եւ աշխարհիկ բանաստեղծութիւնը, մեր շարականների հեղինակների հետ Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին եւ ուրիշները: Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին առաջնակարգ կարող են համարուել միջնադարեան մեծ ազգերի նման հեղինակների հետ: Գրիգոր Նարեկացին բացառիկ երեւոյթներից մէկն է ազգերի նման զբաղանդութեան մէջ, մեղքի ամենախորտ գիտակցութեամբ, ներքին ամենասուրբ յուզումներով եւ հոգու բոլորանուէր ապրումներով, որ իրբեւ անուշահոտ կնդրուկ իւր սրտի ոսկի բուրբանի մէջ ուղղում է առ «տեսնողն գաղտնեաց»: Ուսուցիչ եւ ոչ մի գիրք չէ ունեցել այն ներգործութիւնն ու նշանակութիւնը, որ ունեցել է Նարեկը նախնեաց կրօնական զգացման վրա եւ կենդանի պահպանութեան եւ սերունդէ սերունդ փոխանցման եւ յարաւանութեան մէջ: Իսկ Ներսէս Շնորհալին ոչ միայն հայ ժամապաշտութեան զարդն է, այլ եւ իւր «Հաստով խոսողով» խոսողով յաւերժութեան մի լուսաւոր փարոս է կանգնել հաւատաւոր հոգու առաջ, իրբեւ ուղեցոյց անյիշաչար, լայնախոհ եւ բարեպաշտ քրիստոնեայի համար: Այդպիսի գնահատութեամբ է, որ նա թարգմանուած է այլ եւ այլ լեզուներով:

Բայց մեր միջնադարեան բանաստեղծներն էլ գուրկ չեն անգին զոհարներից: Յրիկի, Նախատուր Կեչառեցու, Կոստանդին Երզնկացու, Թլկուրանցու, Նաղաշի, Գ. Աղթամարցու, մանաւանդ Չոպանեանցի կողմից Քուչակի անունով հորատարակած սիրոյ եւ իրատական ոտանաւորների ժողովածուի մէջ կան քառեակներ, որոնք մրցել կարող են արեւելեան եւ եւրոպական նման լաւագոյն ստեղծագործութիւնների հետ: Մենք համոզուած չենք, թէ նրանք Քուչակին են, շատ տողեր են քառեակներ երբեւմէն արդէն Քուչակից շատ առաջ ապրող գրողների ստեղծագործութիւնների մէջ: Բայց ամանակով աւելի նոր, բայց բանաստեղծական արժէքով էլ արժէքաւոր է Սայաթ Նովան, աշուղական բանաստեղծութեան իշխանը, եթէ նրանց կարգին չհաշուենք Յրիկին:

Ռուս բանաստեղծները, Պրիկուով, Մաքսիմ Կորջի, Վեսելովսկի եւ ուրիշներ շատ բարձր են գնահատել հայ հին եւ նոր բանաստեղծութիւնը, ուստի՝ բազմաթիւ կտորներով թարգմանել եւ առանձին ժողովածուներով հրատարակել:

Մենք չենք խօսում ժողովրդական բանահիւստութեան, ժողովրդական եւ եկեղեցական երգերի եւ մեղեդիների ճոխութեան եւ խորապէս յուզական արժէքների մասին, որ եթէ հաւաքուել լիովին են ներդաշնակուել, մի նոր, գեղարուեստական մեծ շնչք կը ստանանք երաժշտական արուեստի համար:

Հայ քաղաքակրթութեան եւ պատմական դերի լուսաբանութեան մէջ օտարների աչքում կարեւոր մաս ունին եւրոպական գիտնականներից, վերեւ յիշուածներից գաւտ, Հիւլալման, Մէյն, Կեցից եւ ուրիշները, իսկ ուսուցիչականներից Մառ իւր աշակերտներով: Կեցիցի հետ հանգուցեալ Աղոնցին ենք պարտական հայրերի առաջնակարգ դերի լուսաբանութիւնը պետական, պատերազմական եւ քաղաքակրթական մարզերի մէջ, Բիւզանդական կայսրութեան սահմաններում:

Այս թուրքիկ ակնարկների նպատակն էր մեր ընթացողներին պարզել ոչ միայն մշակութային արժէքը, այլ եւ նորա ընդարձակ հորիզոնները մեր մէջ: Ապա-բախտ է եղել մեր վիճակը քաղաքական տեսակէտով, բայց ամաչելով պատճառ չունինք հոգեւոր եւ մշակութային կեանքի մարզերում:

Գնահատենք մեր ստեղծագործական անցեալը, հաստատենք նորա արժէքը գիտակցութիւնը հայ ժողովրդի հոգու մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

(«Հասկ» - 1946)

## ՄԵՐ ԻՂՁԵՐԸ ՀԱՅ ԳՐԻ ՈՒ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ (\*)

Մենք մեծ բանաստեղծ չենք, գրական-գիտական մեծ հեղինակութիւնը, որ մեր «Պատգամը» տանք հայ գիրն ու արուեստը այս երկրին մէջ ամէն գնով ապրեցնել կամեցողներին: Բայց սիրում ենք մեր գիրն ու զրականութիւնը, մեր արուեստն ու մշակոյթը, եւ որպէս այդպիսին մեր համեստ կարողութեան սահմանների մէջ աշխատել ենք եւ պիտի աշխատենք, քանի շունչ կայ մեր բերանում: Ուստի եւ կը կամենայինք մեր սրտի իղձերն ու ցանկութիւնները յայտնել հայ գրի եւ զարթոյնի մասին:

պահպանութեան հարցը մեր գաղութների մէջ, փորձել էինք համառօտակի պարզել, թէ գիրն ու գրականութիւնը, ինչ նշանակութիւն ունին նազանկութիւն ունին պարզ կեանքն ու գոյութիւնը յաւերժացնելու համար պատմութեան մէջ: Ամենայն ազգ կենդանի է, յառաջադէմ, որքան կենդանի է նորա գիտակցութիւնը իր հոգեւոր-բարոյական, գեղարուեստական-մշակութային ժառանգութիւնների մասին: Մարդկային հոգին է իրական կեանք եւ յաւերժական բարեքներ բերելու մէջ այդ աղբյուրը ինչպէս անհատ, նոյնպէս է հանրութեան համար: Մենք ոչ միայն մեր ծնողների եւ ապրած ժամանակի գաւակն ենք, այլ եւ անցեալի եւ մեր նախնեաց: Հոգեկան գիտութիւնները, ինչպէս պատմու-

թիւնն է իւր բոլոր ճիւղերով եւ բնական գիտութիւնները իւր ճանապարհով, պարզում են ժառանգականութեան տեղեկանքները եւ հոգեկանի նկատմամբ կեանքը երեւոյթների կապակցեալ մի շղթայ է, որ զէպի յաւերժականութիւնն է ուղղուած, խզումը այդպիսի օղակաւորման մաս է կորուստ: Անցեալի գիտակցութիւն եւ զնահատութիւն ներկայ եւ գալիք սերունդի կողմից, ազգի անմահութեան երաշխիքն է: Այսպիսի գիտակցութիւնն է այն հոգի ու ջուրը, լոյսն ու ջերմութիւնը, որով

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

(«Հասկ» - 1947)

Շար.ը՝ էջ 10



# Մանկապատանեկան

## ՄԵԾ ՃԱՄԲՈՐԴ ՄԸ՝ ԲԵԻԵՌԱՅԻՆ ԵՂՋԵՐՈՒՆ

Հիսուսային բեռնից մտնել շրջաններում մեջ ապրելու համար բեռնաշին եղջերուն պետք է տեղափոխուի: Ան ամառը կ'անցընէ թունտային (փոքր եւ խիտ թուփերով անտառ) մեջ, իսկ ձմեռը՝ կը վերադառնայ անտառ...



### ● ԱՄԱՌԸ ԹՈՒՆՏՐԱՅԻՆ ՄԵՉ

Թունտային այնքան ցուրտ շրջաններում մեջ է, ուր միայն կարճ խոտը եւ քարաքոսը (բոյսի տեսակ մը) կը բուսնին: Ամառը սառուցը կը հալի եւ ճահիճներ կը կազմէ: Բեռնաշին եղջերուն կը սիրէ այս մեծ տարածութիւնները, որովհետեւ արջերը եւ գայլերը չեն համարձակիր հոն երթալ: Ան կրնայ հանդարտօրէն ուտել քարաքոսը, առանց մխրճուելու աւազին մէջ, որովհետեւ անոր կծղակները կը բացւին մաշկոտանիներու թաթերուն նման:

Ուրիշ կը կապէ: Ասիկանշանն է հեռանալու: Բեռնաշին եղջերուն կ'ուղղուի դէպի անտառ, որ թունտային 1000 քմ. դէպի հարաւ կը գտնուի: Անոնք կը կազմեն հօտ մը, որ կրնայ բաղկանայ մինչեւ 100 հազար եղջերուէ: Աւելի քան մէկ ամսուան ընթացքին հօտը կրնայ օրական մինչեւ 50 քմ. կտրել: Ան նոյնիսկ կը կտրէ գետերը՝ լողալով:

Ներով եւ կը հասնի խոտին՝ ուտելու համար: Երբեմն ան մինչեւ փորը կը մխրճուի ձիւնին մէջ: Մատակները եւ եղնիկները կը նախընտրեն մնալ անտառի մուտքին: Անոնք կը վախճան գայլերէն:

### ԳԻՏԵԻՐ, ԹԷ...

- Բեռնաշին եղջերուն օրական կ'ուտէ 4 - 5 քիլօ քարաքոս, տերեւ եւ խոտ:
- Բեռնաշին եղջերուին բարձրութիւնը կրնայ հասնի 1,30 մեթրէն 2,20 մեթրի:
- Եղնիկը էգն է, իսկ մատակը՝ ձագուկը:

### ● ՄԵԾ ԾԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Օգոստոսի վերջաւորութեան կը սկսի ձիւննել եւ թունտային վրայ սա-

## ՁԵՌԱՅԻՆ ԱՃԽԱՏԱՆԸ


## ԿԱՂԱՆԴԻ ԲԱՅԻԿՆԵՐ

Կաղանդը կը մտնեայ մեծ քայլերով: Դուն կրնաս արդէն ուղարկել Նոր Տարուան եւ Ա. Ծնունդի մաղթանքներու բացիկները:

Այս տարուան բացիկներդ կրնան տարբեր ըլլալ: Դուն խաւաքարտի փոխարէն կրնաս գործածել պարզ եւ գունաւոր թափանցիկ թուղթեր (քալք եւ վիթրայ) թուղթի:

Ունիկուն մը: Անոր վրայ փակցուր կանաչ թափանցիկ թուղթով կաղանդի ծառ մը: Սակայն ծառը փակցնելէ առաջ մի՛ մոռնար գայն գարդարել:

Ձիւնեամարդը - ձերմակ եւ թափանցիկ թուղթէ քառանկիւն մը երկուքի ծալէ: Երկու ճերմակ թուղթէ երիզներ պատէ: Պատէ նաեւ 2 մեծ կլորակներ՝ ձիւնեամարդուն գլխուն եւ մարմնին համար, եւ պզտիկ կլորակներ՝ ձիւնի փաթիլներուն համար: Այս բոլորը փակցուր թափանցիկ թուղթէ բացիկին վրայ: Աւելցուր ոսկի թուղթով գլխարկ մը եւ ճիւղի բարակ կտոր մը՝ իրբեւ աւելի:




Կաղանդի Ծառը - Կաղանդ չկայ առանց ծառի: Մութ գոյնով խաւաքարտի մը վրայ գծէ եւ կտրէ (չափահասի մը օգնութեամբ) պատուհան մը (տես պատկեր): Խաւաքարտի մեծութեամբ դեղին թափանցիկ թուղթին վրայ գծէ եւ կտրէ քա-



Երեք մոգերը - ձերմակ եւ թափանցիկ թուղթէ քառանկիւն մը երկուքի ծալէ: Գունաւոր երեք եռանկիւններ (մեծ, միջակ եւ պզտիկ): Ձանոնք փակցուր թափանցիկ թուղթէ բացիկին վրայ: Փակցուր նաեւ ոսկեգոյն թուղթէ երեք թագեր եռանկիւններուն վրայ, առաւել՝ գիսաւոր աստղ մը երկնքին մէջ:

«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱՉԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԴԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն - 258526, 260115 եւ 241274:

## ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՒ ԿԸ ԾԽԵՆ



Ամէն մարդ գիտէ, թէ ծխելը լաւ չէ առողջութեան համար: Ծխախոտը կրնայ յառաջացնել շատ ծանր հիւանդութիւններ: Սակայն միլիոնաւոր մարդիկ կը շարունակեն ծխել:

Յաճախ մարդիկ կը սկսին ծխելու, երբ պատանի են, չափահասներուն նմանելու համար, փաստելու, թէ իրենք ալ մեծ են: Սկիզբը անոնք չեն սիրեր ծխախոտը: Սակայն կամաց-կամաց անոնք կը սկսին ծխելը հաճելի գտնել:

Ծխողները կ'ըսեն, թէ ծխախոտը գիրենք կը հանգստացնէ: Կը սիրեն անոր համր: Անոնք շատ լաւ գիտեն, թէ ծխելը կրնայ հիւանդութիւններ յառաջացրնել, սակայն այս վտանգը իրենց շատ հեռու կը թուի: Անոնք կ'ըսեն, թէ վստահ են, որ պիտի չհիւանդանան:


Առաւել, շատ դժուար է ծխելէ դադարիլ: Ծխախոտը թմբեցուցիչ կը նմանի: Երբ մարմինը կը վարժուի, անիկա ծխախոտին պէտքը կը զգայ ամէն օր, այլապէս անհանգիստ կը զգայ:

Հետեւաբար, ամէնէն պարզը ծխելու բնաւ չսկսիլն է:

### ԳԻՏԵԻՐ, ԹԷ...

- Երկու գարմիկներ, որոնք նոյն մականունը կը կրէին, թեկնածու էին Յունաստանի Վլասթիս գիւղի գիւղապետի պաշտօնին: Սակայն անոնք ստացան նոյնքան քուէներ ընտրութեան ընթացքին: Ի՞նչ ընել: Որոշուեցաւ վիճակ ձգել ընտրելու համար...
- Պզտիկ ուրուր մը (յափշտակիչ թռչունի տեսակ մը), որ ծնած է Սկովսիա, 5000 քմ. կտրած է առանց հանգստանալու, դէպի տաք շրջանները գաղթի ընթացքին: Մասնագետները, որոնք այս ճամբորդութեան հետեւած են արբանակով, կը հաստատեն, թէ այս ուրուրին կը պատկանի ցարդ արձանագրուած ամէնէն երկար ճամբորդութեան մրցանիչը:
- Սպանացի գիտնական մը ստեղծած է մեքենայ մը, որ կրնայ գիտնալ, թէ ինչո՞ւ երբեք ան կու լայ: Ջայն շինելու համար ան ուսումնասիրած է հարիւր երեխաներու լացը, ապա զանազանած է լացի հինգ տարբեր տեսակներ՝ անօթութեան, ձանձրոյթի, յոգնութեան, սքրէսի եւ նեղութեան: Երբ երեխան լալու կը սկսի, անոր պատճառը կ'երեւի պատասառին վրայ:


## Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր ծաղիկին սոխը:




Որո՞ւն կը պատկանի այս շուքը:



Ի՞նչ բարձրութեան վրայ կը գտնուի այս բոյնը: Ո՞վ շինած է գայն:



Զանի՞ անպ կը տեսնես պատկերին մէջ:



Բեզի ծանօ՞թ են այս շուքերը:



Այս փոքրիկ տղան ինչի՞ պէտք ունի:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

**ԿԻԼԻԿԻԸ**  
ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՅԵԱՐԵՆ  
6 ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ ՕՃՏԱԿԱՐ ԵՆ ՀԱՅԵՒՆ ՆՈՒՐԸ

ՕՍՏՆԱՆ ՔԱՎԱՐՈՒՄ	ԿՆՈՅՈՒՐ	ՓՈՒՆՔՈՍ
ԱԼԵՏՆԱՆ ԱՐ ԼԱՐԸ	ՔԱՎԱՐՈՒՆ ՆՈՐ ԶԵՄԵ	ԸՆԿՆ ԱՐ ԵՆՈՒՐԸ

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ  
«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

**ԴԱՍԱՍԿՈՍ**  
ԼՈՒՍՆԱԿԱԿ ՄԵԼԻՔԵԱՆԻ մահուան քառասունօրյակի առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Դամասկոսի Ս. Կարախան եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԵՆԼԱՆ ՍԱԶԵՄԵԱՆԻ** մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Ս. Նշան Մայր եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԱՆԱՅԻՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ** մահուան քառասունօրյակի առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Ս. Նշան Մայր եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԱՅՆՃԱՐ**  
**ԳԵՈՐԳ ԶՈՐԻՃ ԹԱԾՃԵԱՆԻ** մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԱՅՆՃԱՐ**  
**ՍՕՍԻ ՌՈՐՖԱԼԵԱՆԻ** մահուան Բ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԱՐՈՒՍԵԱԿ ՊՈՋԻԿԵԱՆԻ** (ծնեալ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ) մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան

պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցու մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԱՐՄԷԼ ՌՈՂՈՒՐԵԱՆԻ** մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ՆՈՐԱՅՐ ԲԱԳԼԱՅԵԱՆԻ** մահուան քառասունօրյակի առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ, յաւարտ Ս. պատարագի:

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանի մէջ տարբեր դրամացիներու փակման սակագները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի	32,10 - 32,20	լ.ն.
Իրաքեան տինար	4870,00 - 4880,00	լ.ն.
Քուեյթեան տինար	4972,00 - 4997,00	լ.ն.
Յորդանանեան տինար	2106,00 - 2116,00	լ.ն.
Պահարէսեան տինար	3960,00 - 3985,00	լ.ն.
Ս.Մ.Էմիրութեան տինար	408,00 - 410,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	411,00 - 413,00	լ.ն.
Սէուական ռիալ	399,30 - 401,30	լ.ն.
Օմանեան ռիալ	3870,00 - 3895,00	լ.ն.
Եգիպտական կիւն	285,00 - 295,00	լ.ն.
Անգլիական սթերլին	2377,00 - 2387,00	լ.ն.
Զուիցերիական ֆրանք	1037,00 - 1042,00	լ.ն.
Թրքական լիրա	96,50 - 96,75	լ.ն.
Կիպրական փունտ	2655,00 - 2680,00	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,30 - 12,40	լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2,40 - 2,45	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	962,00 - 967,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	845,00 - 850,00	լ.ն.
Եւրօ	1532,00 - 1542,00	լ.ն.

● **ՈՍԿԻ**  
Անգլիական մէկ ոսկի 125,000 - 130,000 Լ.ն.  
Իրանեան մէկ ոսկի 119,000 - 124,000 Լ.ն.  
Օմանեան մէկ ոսկի 108,000 - 113,000 Լ.ն.  
Մեքսիկական փէսո 595,000 - 615,000 Լ.ն.

Մէկ քիլոկրամ  
ձոյլ ոսկի 15,595,000 - 16,150,000 Լ.ն.  
Մէկ օնս ոսկի 332,00 - 332,50 \$  
Մէկ օնս արծաթ 4,73 - 4,75 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.  
Եւրօ 1.0225 - 1.0230  
Քանադական տոլար 1.5550 - 1.5560  
Զուիցերիական ֆրանք 1.4420 - 1.4430  
Ճափոնական եէն 120.87 - 120.91  
Մէկ սթերլին 1.5879 - 1.5889  
Մէկ տոլար 586 դրամ

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ**  
Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում  
Ա. կարգ 4 5/8 4 5/8  
Բ. կարգ 5 5

ԼՈՒՍԱՑԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

**ՀԱԼԷՊ** **ՀԱԼԷՊ**

Հովանաւորութեամբ՝  
**ԳԵՐՇ. ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ**  
(Բերիոյ հայոց թեմի առաջնորդ)

Հաւուրտ Գարակէօզեան հաստատութեան խնամակալութիւնն ու տնօրէնութիւնը կը հրահրեն Ձեզ՝  
Գերկայ գտնուելու

**ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ**

Հ. Գարակէօզեան հաստատութեան հիմնադիր բարերարներու՝  
**ՄԻՀՐԱՆ, ԶԱՊԷԼ, ԼԵՅԼԱ**

Եւ նորոգ հանգուցեալ տնօրէն՝  
**ՆՈՒՂԱՐ ԵՎ ԱՆԱՆԻՏ**

**ԴԱԻԻԹԵԱՆ** Գերու յիշատակին

Այս առիթով, պիտի պատարագէ եւ քարոզէ առաջնորդ սրբազան հայրը, Ս. Զառանգից Մանկանց եկեղեցու մէջ, Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00ից

**ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5322**  
Պատրաստեց՝ **Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ**

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵՍ
1. Հատուածակողմ - Զայնանիչ:	1. Ճարտարախօս:
2. Զաղացք - Կախարդ:	2. Կրկնուած բաղաձայններ - Մակոյկ - Մէկ:
3. Նհար - Տարբեր:	3. Արական օտար անուն - Կապոյտ ներկանիւթ:
4. Կեր, ջամբ - Սամուէլ մարգարէի մայրը:	4. Շարժիչ:
5. Աղբեր - Համադասական շաղկապ:	5. Մանրոլիւ - Գիշատիչ թռչուն:
6. Ճեղքանակ - Թէ որ:	6. Արշալ:
7. Սաստիկ ատելու - Թեմբ բռնկած:	7. Դրկից գիրեր - Խաղաթուղթի մէկնոց - Յաւելում:
8. Յօժար, հաւան:	8. Յաջան - Հոյովակերտ մասնիկ:
9. Զրախառն ալիւր - Անգան:	9. Ընդարձակ - Տեղական մակերայ:
10. Մորթէ շինուած պարկ - Մար:	10. Տարբեր կերպով:

**ԹԻԻ 5321**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԵՈՒՄԸ**

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Կ	Ր	Օ	Ն	Ա	Կ	Ի	Ց	Ա
2	Ա	Ր	Դ	Ա	Ր	Մ	Ի	Ն	Չ
3	Ր	Ա	Պ	Ա	Ս	Ց	Ց	Ա	Ք
4	Դ	Ա	Հ	Ա	Ն	Ա	Կ	Ն	Ա
5	Ա	Ր	Է	Ս	Պ	Ա	Ս	Ա	Ռ
6	Լ	Ի	Ն	Ս	Ա	Ս	Ա	Ո	Ո
7	Ա	Ա	Ա	Տ	Ր	Կ	Ա	Ի	Ի
8	Ա	Ն	Ի	Կ	Ա	Խ	Ա	Ր	Ք
9	Ս	Ա	Ն	Ն	Ա	Խ	Ն	Ի	Ք
10	Ի	Լ	Ի	Կ	Ա	Մ	Ք	Ս	Է

★ **Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ** ★

★ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)  
Ամսուան լաւագոյն օրը նկատեցք այս, որովհետեւ պիտի ըլլաք գրաւիչ եւ համակրելի՝ ձեր շուրջիցներուն համար: Մանաւորաբար պիտի հանդիպիք անձի մը, որ պիտի հմայուի ձեզմով:

★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)  
Ինչ գործի որ ձեռնարկէք, պիտի յաջողիք այսօր: Պիտի ըլլաք եռանդուն եւ բծախնդիր ամէն մարդի մէջ: Ձեր այս աշխուժ տրամադրութիւնը պիտի յոգնեցնէ ձեր շրջապատը:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)  
Բոլոր բարեկամները միատեղ համախմբելը դիւրին չէ, բայց դուք պիտի կարենաք ընել այդ մէկը եւ պիտի անցընէք սքանչելի երեկոյ մը:

★ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)  
Ձեր նախածնունդիցը առաջին հանգրուանին պիտի յաջողի: Պիտի լսէք քաջալերական խօսքեր: Օրը լաւ է այլ մարդերու մէջ եւս: Ունիք ցանկալի մական շահ:

★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)  
Յառաջացէք առանց հարցումներ ուղղելու, թէ ի՞նչ կ'ընէք: Կ'երթաք իրագործելու ձեր մէկ երազը: Օրը իրեն հետ պիտի բերէ ուրախ նորութիւններ՝ ձեզի հետ ուրախացնելով ցանկ ձեր շուրջիցները:

★ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)  
Յաջողութիւն մը պիտի ունենաք այսօր, որ ցոյց պիտի տայ, թէ բարեխառն էք ձեր վիճակը ամէն տեսակետով եւ պիտի ըլլաք ինքնավստահ: Ունիք ցանկալի դրամական շահեր:

★ **ԿՇՐՈՒՔ** (24 Սեպտեմբերէն 23 Նոյեմբեր)  
Բարեք իրակացութիւն պիտի ստեղծուի գոյգերու միջեւ, զուբաջիչը պիտի ապաւինի միւսին անկեղծութեան եւ նուիրումին: Այսպիսով շատ սոցիալական մեք:

★ **ԿԱՐԻՃ** (24 Նոյեմբերէն 23 Նոյեմբեր)  
Այսօր պիտի կարենաք բազմատեսակ աշխատանքներ իրագործել՝ առանց յոգնութիւն զգալու կամ առանց իրար անցնելու: Պիտի ըլլաք ներշնչուած:

★ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)  
Ձեր գաւակներուն եւ ձեր շրջապատին հետ ձեր յարաբերութիւնները պիտի ըլլան շատ բնական եւ սիրալիր: Պիտի ըլլաք ներշնչուած:

★ **ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)  
Եթէ ձեր անցեալին վերաբերեալ հարցերուն փնտրութեամբ տարուած էք, պիտի ունենաք որոշիչ յաջողութիւն: Ձեր չարչարանքին աւարտ մօտեցած է:

★ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)  
Պիտի ունենաք ազնիւ, հաղորդական ձեր մը, որով պիտի կարենաք ստեղծել նոր բարեկամութիւն: Այսօրուան աստղը դուք պիտի ըլլաք ձեր շրջանակին մէջ:

★ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)  
Դրամական հարցեր պիտի դասաւորէք այսօր քիչ մը տագնապով ձեր մէջ: Այսուհանդերձ մի՛ մտահոգուիք, որովհետեւ պիտի կարենաք միջոցներ գտնել այս հարցերը բարւոյ լուծելու:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

## ՓՈՐԱԳՐՈՒԱԾ ԱՐՈՒԵՍԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Յուցադրուած գործերն օրինակ մը

«Այտա Շարֆան» ցուցադրուած հանրութեան կը ներկայացնէ խումբ մը լիբանանցի եւ օտար կերպարներու տաղանդներու գործերը, որոնք կ'ընդգրկեն տարբեր ոճերու պատկանող շուրջ յիսուն փորագրութիւններ: Լիթոկրաֆիլի, լիւկոկրաֆիլի եւ օֆորթով իրագործուած այս փորագրութիւնները մեծ մասամբ կը ներկայացնեն մարդկային մարմինն ու անոր պանակալ արտայայտած էներ: Ներկայացուած թեմաները կը շօշափեն մարդուն առօրեան իր պարզութեամբ ու սովորականութեամբ, ինչպէս նաեւ՝ անոր զգացական աշխարհը:

Յուցահանդէսին մասնակցած արուեստագէտներն են՝ Հասան Զահրէտտին, Հիւսէյն Մատի, Մոհամէտ Ռաւա, Թոպիաս, Ֆրանսուա Սորկոլո, Ա. Սիկի եւ Սիբիլ Տրմիթ, որոնք գործերը, պահելով հանդերձ անհատական թեմաներու ընտրութիւնն ու ռճային տարբերութիւնները, կը ներկայացնեն մարդուն եւ անոր շրջապատին փոխադրութիւնները: Յուցադրութեան դրուած գործերն է «Պէյրուս»-ը, որ ներշնչուած է քաղաքին հին պատկերներէն եւ անոր վաղեմի բնակիչներէն: Այլ գործեր կը պատկերեն ծաղիկաւոր ընտրութիւնները, որոնք կրնան մաս կապուիլ արդի, կամ նախնադարեան որմնակարչութեան ժամանակաշրջաններուն: Յուցահանդէսը կարելի է այցելել մինչեւ 27 Յունուար 2003:

ՍՅՍՕՐ  
- Նուագահանդէս, Ելոյթ կ'ունենայ զաշնակահար Ուալիտ Հաուրանի, Երեկոյեան ժամը 8.00ից, Ամերիկեան համալսարանի «Էնթուսիազ» սրահին մէջ:  
- Նկարչական ցուցահանդէս. կը ցուցադրուին Յակոբ Գեորգեանի գործերը, «Վարուճակ Արք Սեմ»-ը:  
- Նկարչական ցուցահանդէս, «Ջեքիթա Պէյրուս», Նրմմէ հրապարակ:  
- Նկարչական ցուցահանդէս՝ Վահրամ, «Նոս»-ը Արք» ցուցասրահին մէջ:  
- Փոլ Կիրակոսեանի նուիրուած ցուցահանդէս, «Էմմալոս» ցուցասրահին մէջ:

### ՀԵՌԱՏԵՍԻԼ

Թ. Է.Լ. 09:00 - Սապահո 12:00 - Եհֆրէ 12:30 - Երգերու 13:00 - Մարու հանա 14:00 - Ետրոնիւ 14:30 - Լուրեր 15:00 - Մըշուար 17:30 - Պէս սելըր 18:30 - Ապու Սըիւի 19:30 - Լուրեր 20:00 - Ամերիկեան 21:00 - Լայալի Պէյրուս 00:00 - Պէս սելըր	15:30 - Արաբական ֆիլմաշար 16:00 - Օթոմոպի 19:00 - Այֆաի 20:00 - Արաբերէն լուրեր 20:30 - Արաբական յայտագիր 22:00 - Արաբական ֆիլմաշար	10:10 - Կարոտ 10:45 - Անցեալը ներկան է 11:10 - Հայերը 11:30 - «Արեւիկ» 12:00 - Կանանց հեռուստակուր 13:30 - Առողջութեան աշխարհ 13:50 - Հեռուստաներ- կայացում. Գէորգ Գէորգեան «Գաշտաղէմ» 15:00 - Հայլուր 15:20 - Մուլտֆիլմ «Գէ, սպասիր»
Է.Լ. Պ. Ս. Ի. 07:00 - Սի. Է. Է. Է. Է. տիւ մորնիւկ 07:30 - Պէթմէն 08:25 - Տէտ, պիկ պէյթ 09:30 - Մանուկներու յատուկ քատրոն 10:30 - Նահաբըմ 12:15 - Վիտո - քիփս 12:30 - Նիլալ էլ պէյթ 13:00 - Մոնթիա 14:00 - Ֆուրկոյ 15:00 - Լուրեր 15:15 - Թիթայմ 16:45 - Պատերթալի ախտանշաններ 17:45 - Պիկ պէյթ 19:30 - Մոմէնթիւն (Ռամսանի յատուկ) 19:45 - Շննդեան յայտագիր 17:30 - Արաբերէն լուրեր 20:35 - Սէա պիթըրպ պիտակտ 23:30 - Ամերիկեան յայտագիր	17:30 - Ռամսանի ուսյ ինսան 18:00 - Նօ քունը 18:15 - Քաղաքական յայտագիր 18:30 - Սինեմա / 35mm 19:00 - Լուրեր 20:30 - «Սելեպիթիթ» 21:30 - Սիֆուի 22:00 - Այ մասաիյա 23:30 - Թահիթալ էաում 00:00 - Լուրեր	15:00 - Լուրեր 7:30 - Լուրեր 8:30 - Արթըր 09:00 - Սանտուրան 10:00 - Պոպոլ բնութեան մէջ 10:30 - Սապահ էլ ուարտ 12:30 - Արաբական ժապաւէն 13:30 - Սուրիական ֆիլմաշար 14:30 - Լուրեր 15:30 - Տը Լէսթ փէրրոյայ 16:30 - Ռիմպի բնութան 17:00 - Վիտո ֆէշըն 18:30 - Չունի 19:30 - Լուրեր 20:30 - Արաբական ժապաւէն 21:30 - Ամերիկեան ժապաւէն
ՄՈՒԹԱՔՊԱԼ 7:00 - Լուրեր 9:00 - Այամ Այ Սապահ 12:00 - Խոհանոց 13:00 - Յէլէ ինֆօ 13:05 - Ամերիկեան ժապաւէն՝ «Հանի», այ պիւ ափ տը քիտոյ 14:30 - Ռոքի էնտ հըր ֆրենտոյ 15:00 - Լուրեր	ՆՈՒԹ. Վ.Ի. 7:30 - Լուրեր 8:30 - Արթըր 09:00 - Սանտուրան 10:00 - Պոպոլ բնութեան մէջ 10:30 - Սապահ էլ ուարտ 12:30 - Արաբական ժապաւէն 13:30 - Սուրիական ֆիլմաշար 14:30 - Լուրեր 15:30 - Տը Լէսթ փէրրոյայ 16:30 - Ռիմպի բնութան 17:00 - Վիտո ֆէշըն 18:30 - Չունի 19:30 - Լ	



